

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ԴՐԱԶԱՐԿ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Դրազարկի, երբեմ կոչուած նաև Աւագ Վանքը, և Փոսոյ Անապատ, կը գտնուէք Կիլիկիոյ մէջ, Սիսէն պէ հեռու, գէպի արեւմուտք: Գլխաւոր եկեղեցին նուրիրուած էր Սուրբ Ասուուածածնին: Կար նաև ուրիշ մը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի անունով:

ՊԱՏՄԱԿԱՆՆ-ԴՐԱԶԱՐԿԻ Դրազարկի վանքը շինած է համար նորոգած է Թորոս Ա. (1102) և հոն կարգ ու կանոն հաստատած Գրիգոր Վկայասէքի աշակերտ երկու նշանաւոր վարդապետներու ։ Գէորգ Մեղրիկ և Կիրակոս ։ միջոցաւ:

Դրազարկի վանքը յաճախ իշտառակուած է պատմութեան մէջ իրեւ հանգստավայր Կիլիկիոյ հայ աւագանիին, պետական և քահանայապետական հաւասարապէս: Հոծ թազուած են ժամանակագրական կարգարուած:

1114^o Գէորգ Մեղրիկ. 1127^o Թորոս Ա. 1130^o Փատրուն. 1163^o Բարսեղ վարդապետ (Գր. Երէց, էջ 546). 1169^o Թորոս Բ. 1187^o Սուրբէ Բ. 1193^o Գրիգոր Դ. Տղայ. 1195^o Գրիգոր Ծ. Թարագէտ. 1220^o Յօվհաննէս Զ. Մեծարարոյ. 1252^o Զապէլ Ա. 1264^o Կոստանդին Ա. Բարձրբերդցի. 1270^o Հեթում Ա. 1275^o Բարսեղ Արքայիշրայր. 1285^o Կեռան թագուէկի. 1298^o Թորոս Գ. 1317^o Ալինախ, որդի Լեւոն Բ. Ի. 1320^o Օշին թագաւոր. 1327^o Կոստանդին Դ. Լամբրոնի Սմբատացի (Սմբատ էջ 130). 1352^o Մարիէն, մայր Կոստանդին Բ. թագաւորի:

Դրազարկի վանահայրերը, ընդհանրապէս, էին միեւնոյն ատեն Սիսի Արքեպիսկոպոսները: Անոնքնէ ծանօթ են հետեւաւեները.

1. — Գէորգ Վրգ. Մեղրիկ (ֆ. 1114). — Մնած է Վասպուրականի Ալիւր գիւղը Հ. 1040 թասին: Թառհայեցի կը բագէ զայն իր ու սքանչելի ճգնաւոր (Տպ. Արուսագէմ, էջ 417-8):

2. — Կիրակոս Վրգ. (1114-1127). — Գրիգոր Մեղրիկի դասէնկերը, որ կանան ներ հաստատեց Դրազարկի համար (Սամ. 128):

3. — Բարսեղ Վրգ. (1163). — Կ. Պոլսէն բերել տուած է յունարէն օրինակ մը և Հաւաքումն Մեղնութեանց Եւթանիցանց թղթոցն Կաթողիկեաց գրքէն և յանձնած Գրիգոր Դարբին ի Լամբրոն, որ հայերէնի թարգմանէ զայն (Հանդ. Ամս. 1915 էջ 74):

4. — Սամուել Խոպ. (1173-1182). — Սիս. էջ 233:

5. — Ցովիաննենս Մեծարարոյ (1198-1200). — Աս Սիսի Արքեպիսկոպոսութենէն բարձրացաւ Կաթողիկոսական աթոռ (1203-1221):

6. — Հերում-Կելի Լամբրոնայի (1200-1211). — Մեծն Լեւոն զինքը գեսպան գրից 1210ին, Պազին և Բիոն Կայսրին (Սիս. 510, 553): Թարգմանած է 1211ին սեպարագութիւն Կայսերաց և Քահանայապետաց Հառվայց գրուած քը (Զարբ. Թրգմ. էջ 1.):

7. — Բարսեղ Խոպ. (1220). — Սիս. 233:

8. — Բարսեղ Արքայեղբայր (1241-1275 Ապրի 19). — Սիս. 233:

9. — Թորոս Ալաջնորդ (1292). — Պատմանագիրք, Վանահարց Ա. Կարապետ Վրգ. Էծւսարարեան, Երուսալէմ, 1912, էջ 65:

10. — Ցովիաննենս Խոպ. (1301). — Սիս. 234:

11. — Կոստանդին Կեազարկեցի (1307-1323). — Հայոց թագաւորութեան քարտոն՝ զարդ Մասնակցած է Սիսի և Աստանայի ժողովարուն. ապա եղած է Կաթողիկոս (1323 շուրջ 1326):

12. — Հայրաբետ Քահանայ (1325). — Որոն եղաբարյն է Առաքիաս Կուսակրօն քահանայ: — Սիս. 234:

13. — Բարսեղ Խոպ. (1343). — Մահակացած է Միսիթաց Կաթողիկոսի գումար բաժն պողովին: — Ազգպ. էջ 1869:

14. — Ցովիաննենս Արքեպիսկ. (1371). — Հայոց Մարիամ թագուէիէն գեսպան զըրկւած է Նեապոլիս: — Սիս. 560:

ՄԵԼԱԿՈՒԹԱՅԻՆ. որ Դրազարկի վանքը Հայկական Կիլիկիոյ մշակոյթի մէծ կազբականերէն մին եղած է ԺԲ.-ԺԴ. գարերուն

Հոն փայլած են բազմաթիւ Գրիչներ և Մանրանկարիչներ, որոնց գործերուն բաւական մէջ մասը անկորուստ հասած է մեղի բարեբախտաբար:

Ժամանակագրական կարգով կը ներկայացնենք նայ գրքի տաղանդաւոր կամ հասարակ աշխատաւորները, որոնք տարիներով գրտինք թափած են Դրազարկի խուցերուն մէջ, ուստան լոյսը հայուն մօտ վառպահելու համար:

Ա. - Գէորգ Գրիչ. — Աւետարան մը գրած է 1113 թուին, Կիրակոս վարդապետի հրամանով: — Սիս. 233:

Բ. — Թորոս Գրիչ (1173-1182). — Օրինակած է

1. — Պողոսի Թուղթերը, 1173թ. — Սիս. 233:

2. — Աւետարան, 1182թն. — Սիս. 233:

Գ. — Խաչատուր Քահանայ Մաղկող. — Դրազարկի մէջ ծաղկած է 1183 թուին, Թորոս Գրիչ օրինակած Աւետարանը: — Սիս. 233:

Դ. — Բարսեղ Եպս. Վանահայր, Գրիչ.

Ասուածառունչի մը ընդորինակութեան մասնակցած է 1220 թ. — Սիս. 233: Սարգ. թ. 303:

Ե. — Կիրակոս Գրիչ եւ Մաղկող. — 1229 թն օրինակած է ձառցի մասեր. — Տաշ. 53:

Զ. — Գրիգոր Գրագիր. — 1241 թն օժանդակած է Յովհաննէս Գրչին Քարոզներ գրելով: — Սարգ. թ. 1066:

Է. — Յովհաննէս Գրիչ. — Դրազարկի մէջ Յուսէփ Երաժշտապետի օրինակէն քաղաքաբած է Տաղարան յը, 1241 թն. — Սարգ. թ. 1065-1066:

Ը. — Թորոս Քահն. Մշեցի կամ Տարօնեցի, նշ. Գրիչ եւ Մանրանկարիչ (1284-1336). — Դրազարկի մէջ օրինակած և նըկարազարդած է հետեւեալները:

Ի. — Աւետարան, 1292 թն, զոր կ'ընծայէ Տարօնի Ս. Յովհաննու Կարապետի վանքին. — Քաւազանագիրք. Կ. Վրգ. Լուսարաբեան, էջ 65-68:

Ջ. — Աւետարան, 1299 թն. — Ս. Յ. թ. 24:

Զ. — Նոր Կառակարան, 1331 թն. — էջմ. Մատ. թ. 208, 154:

Դ. — Նարական, 1335-6, Աւագ Անապատի մէջ. — Կար. 1580, Տողակաթ էջ 213:

Թորոս Տարօնեցին ուրիշ գործեր ալ ունի, որոնց գրութեան վայրը անձախօթէ, կամ Դրազարկէն տարերը տեղ մըն է:

Թ. — Սարգիս Քահն. Պիծակ, նշ. Գրիչ եւ Մանրանկարիչ (1301-1348). — Որդի Գրիգոր Քահանայի և Հեղինէի: Դրազարկի մէջ ծաղկած է հետեւեալները:

1. — Աւետարան. — Գրիչն է Գրիգոր որդի Միլիայլի. Սարգիս Պիծակ նկարազարդած է 1325 թն. — Սիս. 234:

2. — Աւետարան. — Գրիչն է Թորոս Հոսկիլյայցի. Սարգիս ծաղկած է 1332 թն. — Սարգ. 37:

3. — Աստուածառունչ, 1338 թն, Յակով Գրիչ Եւստ, Յակով Բ. Անաւարզեցի Կաթողիկոսի համար: Անկարողը ինքն է: Կաղամողը՝ Յովհաննէս Սարկաւագ: — Շողակաթ, էջ 203: Տաթեւ Տարեցոյց, 1930, էջ 202-3:

Սարգիս Քահանայ Պիծակ ունի տակաւին բազմաթիւ գործեր, որոնց Դրազարկի մէջ կատարուած ըլլալը սակայն սուռգապէս որոշ է:

Ժ. — Յովհաննէս Քահն. Գրիչ, 1309 թուին օրինակած է Աւետարան մը (Մասամբ), Փառոյ Ռեստին մէջ. — Սիրեմ. Ա. 47:

ԺԱ. — Հայրապետ Գրիչ (1309). — Յովհաննէս Քահանայի մասամբ գրած Աւետարանը ամբողջացուցած է Փառոյ Ռեստին մէջ (Սիրեմ. Ա. 47): Յայտնի էլ թէ նոյն տնեն կ Հայրապետ քահանային հետ որ վանահայրերու շարքին կ'երեւի 1325 թն:

ԺԲ. — Յակով Երէց Մեծապարհնենց, Կաղմող (1309-1318). — Կաղմած է:

1. — Աւետարան, 1309 թն, որուն Գրիչն է Ստեփանոս Սարկաւագ, իսկ Ստացողը Տիկին Զապլուն:

2. — Աւետարան, 1309 թն գրուած, Ճեռամբ Յովհաննէս Քահանայի և Հայրապետ Գրողի: Ստացողն է Գետրոս Կուսակըն քահանայ. — Սիրեմ. Ա. 47:

3. — Մանուսաւմն, Կաղմած է 1313 թն: Գրիչն է Ստեփանոս վանական քահանայ. — Սիս. 233:

ԺԴ. — Ստեփանոս Վանական Քահանայ (1313-1328). — Օրինակած է:

1. — Մանուսաւմն, 1313 թն. — Սիս. 233:

2. — Նարական, 1328 թն, Մագաղաթի վրայ, ընտիր բոլորգորպ և ոսկենկար. — Կար. 1534, Շողակաթ էջ 211:

ԺԴ. - Վահան Քահն. Գրիշ (1316-1321). — Ընդօրինակած է,

1. — Յայսմաւուրք Կիրակոս Արեւելցիի, 1316 թուրին, զոր Լեռն Դ: Նուիրած է Քէրէքի Հայոց Նկղեցւոյն, 1330ին. — Ծողակաթ էջ 212, Միաբ. էջ 170:

2. — Ճառընթիր, 1321ին. — Զարբ. Թրգմ. էջ 728:

3. — Ներբողեան Ս. Կուսին Գրիգոր Սկեւուացիի, 1321ին. — Հ. Դպր. էջ 716:

4. — Աստուածութիւն, Սաղմոս Սարկաւագեան օրինակէն. — Տաշ. էջ 632:

ԺԵ. — Յակոբ Քահն. Գրիշ (1319-38). — Օրինակած է:

1. — Սալմոս - Շարական - Փամագիրք Մը, Օչին թագաւորի համար, Թորոս Հռոմ. Կլայցիցի Կրչին Կետ: Իր գրած մասերն են Սաղմոսն ու Փամագիրքը: — Միւրմ. Ա.

6. և. Նկարագիր Օչին Թագաւորի Զեռ.

Փամագիրքին, Անթիւսա, 1933:

2. — Աստուածութիւն, 1338ին, Սարգիս քահն Քահնայի հետ, Յակոբ Բ. Կաթողիկոսին համար. — Ծողակաթ, էջ 203: Տախե, 1930, էջ 202-3:

ԺԶ. — Գրիգոր Գրիշ եւ Կազմող, որդի Միւսայի միայնակեցի և Թէփանոյ, և քեռորդի Սարգիս Քահնայի (Պիծակ), (1325-1334). — Օրինակած է,

1. — Աւետարան, 1325ին, զոր ծաղկած է իր քեռայրը. — Միս. 234:

2. — Աւետարան, 1331-2ին: Գրիշն է Թորոս Հռոմկլայցի. Մաղկողը Սարգիս Պիծակ: Գրիգոր օրինակած է Համարաբառները, Գլխահամարները և Նախազրութիւնները, 1332ին. — Մարգ. Թ. 97:

3. — Աւետարան, 1334ին, զոր ծաղկած և սուկած է իր քեռայրը Սարգիս Քահնայ. — Միս. 235:

ԺԷ. — Թորոս Հռոմկլայցի, Գրիշ (1319-1331). — Դրազարկի մէջ ազնիւ մագաղաթի վրա ընամի բուրգարգ օրինակած է:

1. — Սալմոս - Շարական - Փամագիրք, 1319ին, Օչին թագաւորի համար և Յակոբ քահնայի հետ: Իր գրած մասն է Նարականը. — Միւրմ. Ա. 6, և, Նկարագիր և այլն:

2. — Աւետարան, 1331ին, Սարգիս Քահնայի համար. — Մարգ. Թ. 97:

Դրազարկի վանքը ունեցած է նաև համբաւաւոր Երամիւսներ, որոնցմէ մի քա-

նիին անունները յիշատակուած են. զըժախտարար սակայի մեղի չին հասած առև զեկութիւններ անոնց կեանքին և երաժշտական գործունէութեան մասին: Անաւասիկ այդ երաժշտաներու ցանկը:

1. — Յովկէփ Խրամօսապես Գրազարկի վանքին (1241), որուն Տաղարանի շատ զեղցիկ օրինակը իրեն գաղափար ըրած է Յովկաննէ երաժիշտ: Այս վերջինին համաձայն Յովկէփ երաժշտապետը լիովին հասու էր երաժշտութեան, և իրեն նմանը չէր գտնուեր այդ սրբուն (Մարգ. Թ. էջ 1065-1066):

2. — Սիմեոն Դպրապես Դրազարկի սրբ. 517:

3. — Յակոբ Ներց (1313). — Միս. 517:

4. — Յովինաննէ Կուտակրօն Քահնանայ (1313), Յակոբ երեցի եղբայրը. — Միս. 517:

5. — Թորոս (= Պեղուոս) Քափրոնց (Ք. 1342 Դեկտ., 27). — Արքունի Աւագերէց, և երաժշտակամ Դասապետ Դրազարկի, որ Պաղտին Մարաջախոտի հետ գեռապն զրկուած է 1307ին, Լեռն Գ. ի ու նոր խնամակալ Հեթում Բ. ի կողմէ և Անգլիոյ եղուարդ Բ. Թագաւորին (Միս. 234-5, 517): Կիլիկոյ Արքունի Յայսմաւուրի քին մէջ Թորոս Քափրոնց կոչուած է օհմաստուն և համճարեղ երաժիշտու (Հայուպատում, Ալիշան, էջ 545): Թափրոնցն ըլլալու է այն արքունի գրան Աւագերէց Թորոսը, որ յիշուած է Օչին թագաւորի համար գրուած Սաղմոս-Նարական-Ժամագիրքի յիշատակարանին մէջ (Միւրմէնան, Նկարագիր, հայլն, էջ 101):

Ն. Վ. ՄՈՎԱԿԱՆ

